ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4 (9)

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք.Երևան 20 օգոստոսի 2019թ.

ժամը 12[00]

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նիստին մասնակցում էին՝

Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Վարդապետյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բ. Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ
Ա. Բախշյան	- «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական
Ա. Մարտիրոսյան	- «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի զարգացման գծով տնօրեն

<u>Բացակայում էին</u>

Ա. Հարությունյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և նախարար (խորհրդի նախագահ)
Ս.Ալոյան	- «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

<u>Ներկա էին</u>

Ալ. Շագաֆյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Ա. Գևորգյան	- Խորհրդի քարտուղար

<u>Հրավիրվածներ</u>

Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Ավետիսյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական
Ռ. Գալստյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Զ. Միքայելյան	-ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ
Լ. Մաթևոսյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի քննարկում:

Հարց 2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջեի ապրանքների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին հիմնավորման քննարկում:

Հարց 3. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների քննարկում:

Հարց 4. 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությունների քննարկում:

Հարց 5. ՆՈՒՀ-երի ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման ձևաթղթի հաստատում:

Հարց 6. Դպրոցների կրթության որակի գնահատման ձևաթղթի հաստատում:

Հարց 7. Դպրոցի դասալսման ձևաթղթի, դասալսողի հուշաթերթի հաստատում:

Հարց 8. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2019 թվականի ծրագրի հաստատում:

Հարց 9. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման կողմից 2019 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվության ներկայացում:

Հարց 10. ՀՀ կրթության տեսչական մարմնի 1-ին և 2-րդ եռամսյակների կատարողականների գնահատման ներկայացում:

Ընթացիկ հարցեր:

Նիստը վարում էր խորհրդի անդամ՝ **Ա. Ասոյանը** (խորհրդի նախագահի հանձնարարությամբ):

Ա. Ասոյան ճշտեց՝ նախորդ նիստում տրվե՞լ են հանձնարարականներ այս նիստին ներկայացնելու համար:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ չեն եղել:

Ա. Բախշյանին հետաքրքրեց, թե ինչ հաջորդականությամբ են քննարկվելու օրակարգի հարցերը:

Ալ. Շագաֆյանը առաջարկեց օրակարգի քննարկումը սկսել ֆինանսական հարցերից՝ և առաջինը քննարկել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջեի ապրանքների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին հարցերը,

2-րդը քննարկել օրակարգում նշված 4-րդ հարցը՝ 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությունները, այնուհետև՝ 5-րդ, 6-րդ, և 7-րդ հարցերը (ՆՈՒՀ-երի ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման, դպրոցների կրթության որակի

գնահատման և դպրոցի դասալսման ձևաթղթերը), հաջորդիվ՝ 3-րդ հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, այնուհետև՝ ՀՀ կրթության որակի բաժինը կներկայացնի հաջորդ՝ 8-րդ, 9-րդ և 10-րդ հարցերը:

Ա. Բախշյանն առաջարկեց սկսել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի բաժնի հարցերից, նշելով, որ որակի հաշվետվությունները ՀՀ կրթության տեսչական մարմնի կատարած աշխատանքների փաստացի հաշվետվությունն է:

Ալ. Շագաֆյանը ասաց, որ օրակարգի վերաբերյալ իր առաջարկը պայմանավորված է քննարկվող խնդիրների բարդությունից, և որ սկզբում քննարկվեն ավելի թեթև հարցերը, այնուհետև՝ բարդերը:

Ա. Բախշյանը մտահոգություն հայտնեց, որ ճիշտ կլինի սկզբում լսեն որակի հաշվետվությունները, քանի որ վերջում հնարավոր է խորհրդի անդամները շուտ հեռանան և կարևոր հարցերը մնան չքննարկված:

Ա. Ասոյանը արձանագրելով, որ ներկաների կողմից այլ առաջարկներ չկան, առաջարկեց օրակարգում ավելացնել ևս 3 հարց

1. քննարկել բյուջետային գործընթացների պատասխանատու անձի հաստիքի նախատեսման հարցը,

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարին ընձեռվի հնարավորություն մինչև 2 մլն. դրամի չափով բյուջեում նախատեսված պահպանման ծախսերից ծրագրում բաշխումներ իրականացնել տարվա կտրվածքով՝ խորհրդի մեկ որոշմամբ, որպեսզի ամեն անգամ բյուջեի հոդվածներում փոփոխություն կատարելու համար չանրադառնան այդ հարցին,

3. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործող կանոնադրության մեջ կատարել փոփոխություն՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժինը վերանվանել որակի ապահովման վարչություն:

Հանձնարարվեց նաև, որ հաջորդ նիստի օրակարգի 1-ին հարցով կներկայացվի հաղորդում նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականների կատարողականի վերաբերյալ, եթե այդպիսիք կան:

Նշվեց, եթե չկան առարկություններ, ապա այս տեսքով սկսեն քննարկել օրակարգի հարցերը:

Ալ. Շագաֆյանը շնորհավորեց ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար՝ Արթուր Ասոյանին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, շնորհավորեց ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին, ՀՀ էկոնոմիկային նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին, և «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի զարգացման գծով տնօրեն Արթուր Մարտիրոսյանին ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու կապակցությամբ:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ օրակարգում կատարված փոփոխությունների արդյունքում օրակարգի՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջեի ապրանքների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին 2-րդ հարցը քննարկումից դուրս է գալիս:

Նա ողջունեց նաև ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի՝ այսուհետ վարչության փոխելու առաջարկը, հույս հայտնելով, որ այն դրական կանդրադառնա նաև աշխատակիցների աշխատավարձին:

Խոսելով առաջադրված հարցի՝ բյուջետային գործընթացների պատասխանատու անձի հաստիքի վերաբերյալ, Ալ. Շագաֆյանը նշեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը ստացել է համապատասխան որոշումը, և այդ ուղղությամբ աշխատանքներ տարվել են, սակայն հավելեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմնում կա աշխատակից, որն ունի համապատասխան մասնագիտական որակավորում, անհրաժեշտ հմտություններ և մինչ օրս զբաղվել է ֆինանսաբյուջետային բոլոր հարցերով: Նշվեց, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի կադրերի հետ քննարկվել է այն տարբերակը, որ պաշտոնի անձնագրում կատարվի համապատասխան փոփոխություն նշված աշխատակիցը, որպես քաղաքացիական ծառայող կարողանա իրականացնել նաև այդ աշխատանքը, եթե խորհուրդը չի առարկում:

Ա. Ասոյանն առաջարկեց, սկսել քննարկումը առաջադրված 3 հարցերով՝

1. բյուջետային գործընթացների պատասխանատու անձի հաստիքի վերաբերյալ: Ասվեց, որ «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 03.07.2014թ. N 737-Ն որոշմամբ ավելացվել է հատուկ տող բյուջետային գործընթացի մասնակցի վերաբերյալ, որը քննարկվել է ՀՀ ֆինանսների նախարարությունում և ՀՀ կառավարության որոշումն արդեն առկա է: Քաղաքացիական ծառայողի հաստիքի մասին չէ խոսքը, հաստիքը չի լինելու քաղաքացիական ծառայողի, այլ սովորական հաստիքային աշխատողի, ով կզբաղվի բյուջետային գործընթացով: Ա. Ասոյանն առաջարկեց խորհրդին հավանություն տալ այդ առաջարկին, հաշվի առնելով, այն փաստը, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը ֆինանսական կամ հաշվապահական ստորաբաժանում չունի:

Խորհրդի քարտուղարությանը առաջարկվեց այսուհետ խորհրդի նիստերի բոլոր արձանագրություններին կցել նաև օրակարգի հարցերի քննարկման արդյունքներն առանձին որոշումների տեսքով:

Ա. Հայրապետյանը հարց ուղղեց, թե ի՞նչ տրամաբանությամբ է պայմանավորված 1 և ոչ ավել հաստիք տրամադրելը,

Ա. Ասոյանն ասաց, որ խնդիրը ՀՀ տեսչական մարմինների աշխատակազմերում տվյալ բաժինների բացակայությունն է, ի տարբերություն ՀՀ կառավարության:

Ա. Հայրապետյանն առարկեց, ասելով, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը կարող է իր ռեսուրսների հաշվին լուծել այդ հարցը:

Ա. Ասոյանը պատասխանեց, որ եթե կարող է՝ թող լուծի, քանի որ իրենք բազմաթիվ գրություններ են ստացել, որ առկա է ստուգում իրականացնող մասնագետների պահանջ և եթե ընձեռնվի հնարավորություն առանձին հաստիք տրամադրել ֆինանսաբյուջետային գործընթաց իրականացնելու, ապա նմանատիպ պարտականություններով տեսչական մարմնի այլ ծառայողներին ծանրաբեռնելու անհրաժեշտություն չի առաջանա:

Ա. Հայրապետյանն ասաց, եթե որոշումը պարտադրում է, թող լինի:

Ա. Ասոյանը պատասխանեց, որ որոշումը չի պարտադրում, այլ հնարավորություն է տալիս, որպեսզի լինի բյուջետային գործընթացները կարգավորող հարցերով զբաղվող հաստիք:

Ա. Հայրապետյանն ասաց, եթե գործառույթի բաց կա և ՀՀ կրթության տեսչական մարմինն այն իրականացնում է իր ռեսուրսներով, այդ դեպքում, ո՞րն է խնդիրը:

Ա. Ասոյանը պատասխանեց, որ աշխատակիցը համատեղությամբ չի կարող իրականացնել, քանի որ դրա համար անհրաժեշտ է ֆինանսական գիտելիքներով մասնագետ, որը կհամագործակցի ՀՀ վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ: Նշվեց, որ հարցը բազմիցս քննարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության և պարոն Բրուտյանի հետ և սա ամենաօպտիմալ տարբերակն է:

Ա. Հայրապետյանը շարունակեց՝ ասելով, որ ինքը չի քննարկում կառավարության որոշումը, այլ փորձում է հասկանալ ներկայացվող իրավիճակը:

Ալ. Շագաֆյանը ասաց, որ կփորձի ներկայացնել իրավիճակը՝ ասելով, որ ՀՀ կառավարության որոշումը շատ տեղին է, և բոլոր տեսչական մարմինները այդ գործառույթը մաքսիմալ արդյունավետ իրականացնելու կարիքն ունեն, իսկ ՀՀ կրթության տեսչական մարմինը առաջարկում է այլ լուծում, քանի որ մարմնում կա համապատասխան մասնագիտական գիտելիքներով աշխատակից:

Ա. Ասոյանն ասաց, որ միայն պաշտոնի անձնագրով չի կարող լինել, ըստ ներքին կանոնադրությունների՝ նշված բյուջետային գործընթացները կարող է իրականացնել միայն համապատասխան մասնագետը, և, որ այդ հարցը բազմիցս քննարկվել է և ստացել առաջարկվող լուծումը:

Ա. Հայրապետյանն առաջարկեց, որ բոլոր տեսչական մարմինների համար լինի մեկ ընդհանուր օղակ, որը կզբաղվի այդ աշխատանքով, իսկ մարմիններն էլ կզբաղվեն իրենց հիմնական աշխատանքով: Ֆինանսական կարգապահության մեջ է խնդիրը, թե՞ գնման:

Ա. Ասոյանն ասաց, որ պարոն Հայրապետյանի մտահոգությունը կիսում է, և, որ խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ վարչապետի աշխատակազմում համապատասխան ստորաբաժանումները՝ կադրերը, գնումները և ֆինանսիստները զբաղվում են տեսչական մարմինների տվյալ գործառույթներով: Երբ տեսչական մարմինը ներկայացնում է միջնաժամկետ ծախսային ծրագիր կամ բյուջետային հայտ՝ տվյալ մարմնի ղեկավարից և աշխատակցից լավ ոչ մեկը չի կարող ներկայացնել:

Ալ. Շագաֆյանն ավելացրեց, որ տվյալ որոշումը լավ է թեկուզ նրա համար, որ տեսչական մարմին բազմաթիվ ֆինանսական գրություններ են մուտք լինում և դրանց պատասխան գրություններ է գրվում: Ասվեց, որ կիսում է Ա. Ասոյանի մտահոգությունը այն առումով, որ նշված պարտականությունները լիազորելով տեսչական մարմնի ծառայողներից մեկին՝ ռիսկ կա, որ տվյալ ծառայողը պաշտոնը թողնելուց հետո տեսչական մարմինը խնդրի առաջ կկանգնի:

Ա. Ասոյանը հարցը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով հաստատեց օրակարգի հարցը:

Նիստի օրակարգ ներառված լրացուցիչ հարցերի քննարկումից հետո **Ալ. Շագաֆյանը** հակիրճ ներկայացրեց հիմնական օրակարգի 1-ին հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը: Նշվեց, որ 2019 թվականի համար ՀՀ կրթության տեսչական մարմնին բյուջով հաստատված գումարը կազմում է **221,807,100** ՀՀ դրամ, իսկ 2020 թվականի համար **18,101,700** ՀՀ դրամի չափով կավելացվի, որը ներկայացված է բյուջետային հայտի մեջ: Այն պայմանավորված է հետևյալ խոշոր ծախսերի գծով ավելացումներով՝ **7,000,000** ՀՀ դրամը հատկացվելու է ջեռուցման համար, քանի որ ՀՀ կրթության տեսչական մարմնի տարածքը ջեռուցվում է Ռաֆֆու դպրոցի կաթսայատնից, ինչը բարդություններ է առաջացնում տեսչական մարմնի համար ջեռուցման սեզոնի ընթացքում: **3,000,000** ՀՀ դրամ նախատեսվում է պահակների և շենքի անվտանգության համար: **1,540,000** ՀՀ դրամը նախատեսված է տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար, իսկ **2,000,000** ՀՀ դրամը՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման համար:

2021թ. նախատեսված բյուջեի դրամային և տոկոսային շարժերը 2020թ. ընթացիկ բյուջեի նկատմամբ կնվազեն **12,658,200** ՀՀ դրամի չափով, իսկ 2022թ.՝ **820,100** ՀՀ դրամ:

Ա. Ասոյանն առաջարկեց հարցը քվեարկել:

Ա. Հայրապետյանը հարցրեց, թե ի՞նչ ձևով է այն ազդելու աշխատանքի որակի վրա, միգուցե արդարացված լիներ, որ շենքի անվտանգության փոխարեն գնվեր համակարգիչ կամ մասնագետ վերապատրաստել: Տեսչական մարմնի աշխատանքների որակը ի՞նչ ուղղությամբ է փոփոխության ենթարկվելու մոտակա 3 տարիների ընթացքում:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ միգուցե հստակ չներկայացվեց ծրագիրը, բայց եկող տարվա համար հիմնական ավելացումը մեծ հաշվով վերաբերում է տեխնիկական միջոցներին, և այդ 2,000,000 ՀՀ դրամը նախատեսվել է աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Ա. Բախշյանը ցանկություն հայտնեց, որպեսզի Ալ. Շագաֆյանը բացված ներկայացնի այդ կարողությունների զարգացումը:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ հաստատումից հետո ներքին գնահատում կարվի և առաջնահերթությունները կհատկորոշվեն:

Ա. Բախշյանն ասաց, որ այդ 2,000,000 ՀՀ դրամը բավարար չէ կարողությունները զարգացնելու համար:

Ալ. Շագաֆյանը համաձայնեց և ասաց, որ նման հնարավորություն չի եղել, և մինչ այդ արվել է գործընկերների միջոցներով, այդ թվում տեխնիկական միջոցների ավելացումը, ինչ վերաբերում է շենքային անվտանգության խնդիրներին, ապա ապահով կառույցը ևս հավակնություն ունի տրանսֆորմացվել որակին, թեկուզ այն, որ, ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարը և տեղակալները այն ժամանակահատվածը, որ ծախսում են տեխնիկական և կենցաղային հարցերի լուծմանը՝ կտրամադրեն ավելի առաջնային ու հրատապ խնդիրների լուծմանը:

Ա. Բախշյանն ասաց՝, ինչ վերաբերում է տեսչական մարմնի հետագա ֆինանսավորման խնդրին, կապված է լինելու արդյունավետության բացահայտ վիճակից, իսկ այսօրվա որակի բաժնի հաշվետվությունը նման ակնկալիքներ չի տալիս, հետևաբար արդեն հիմա պետք է անհանգստանալ այդ կարողությունների զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ

է դնել կոնկրետ պահանջ, ինչպիսի մասնագետ է Ձեզ անհրաժեշտ կամ Ձեր մասնագետների որակը բարձրացնելու համար ինչ պետք է անել և ինչպիսի միջոցներով, և այսօր այն պետք է մտցնել միջնաժամկետ ծրագրի մեջ: Կառավարությունը դա պետք է աներ, քանզի դրանից է կախված այն որակի ակնկալիքը, որի մասին ասվեց: Ա. Բախշյանը խոսքն ավարտեց ասելով, որ ինքն այս ծրագրին դեմ է քվեարկելու, այդ թվում 2,000,000 ՀՀ դրամին:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկել հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Խորհուրդը հաստատեց ծրագիրը՝ 6 կողմ, 1 դեմ ձայնով:

Դեմ քվեարկեց Ա. Բախշյանը:

Ա. Ասոյանն առաջարկեց քվեարկել նաև նախորդ՝ բյուջետային գործընթացների պատասխանատու անձի հաստիքի վերաբերյալ հարցը:

Խորհուրդը միաձայն հաստատեց հարցը, քվեարկելով՝ 7 կողմ:

Ա. Ավանեսյանը հետաքրքրվեց, թե տեսչական մարմինը աշխատակազմի մասնագիտական զարգացման համար համագործակցու՞մ է միջազգային կառույցների հետ:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ նման փորձեր արվում են, և ՀՀ տեսչական մարմնի կողմից վերջին մեկ և կես տարվա ընթացքում արվածը նաև գործընկերների հետ համագործակցության արդյունք է:

Ա. Ավանեսյանը խորհուրդ տվեց ուսումնասիրել ծրագիրը, որը կարծում է օգտակար կարող է լինի ՀՀ կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացման ծրագրին:

Ա. Ասոյանը շնորհակալություն հայտեց, և ասեց, որ այդ համագործակցությունը կա և հետագայում էլ կզարգացվի:

Ա. Ասոյանն առաջարկեց այս համատեքստում քննարկել նաև այն 2 հարցերը, որոնք օրակարգում ավելացան, իսկ հետո՝ անցնել մյուս հարցերի քվեարկությանը:

Առաջինը՝ տեսչական մարմնին հնարավորություն տրվի մինչև 2 մլն. դրամի չափով բյուջեում նախատեսված պահպանման ծախսերից ծրագրում վերաբաշխումներ իրականացնել խորհրդի մեկ որոշմամբ՝ տարվա կտրվածքով՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարին հնարավորություն տալով տողային փոփոխություններ կատարել բյուջեի հոդվածներում: Այսինքն, պրինտեր, գրիչ կամ թուղթ գնելու համար պարտադրված խորհրդի նիստ չգումարել, և տեսչական մարմնի ղեկավարը կարողանա անհրաժեշտ պիտույքը կամ կենցաղային իրը ձեռք բերել:

Ալ. Շագաֆյանը շնորհակալություն հայտնեց, նշելով, որ նման խնդրի առաջ տեսչական մարմինը արդեն կանգնել է, որի համար հրատապ հեռավար նիստ է գումարվել: Խորհրդի հավանությունը ստանալու դեպքում օրակարգի 2-րդ՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի բյուջեի ապրանքների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին հարցը դուրս կգա օրակարգից:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկել

Հարցը խորհուրդը հաստատեց և քվեարկեց՝ 7 կողմ:

Ա. Ասոյանը օրակարգի հաջորդ հարցով առաջարկեց քվեարկել նաև ՀՀ կրթության տեսչական մարմնի գործող կանոնադրության մեջ կատարել փոփոխություն՝ որակի ապահովման բաժինը փոխել որակի ապահովման վարչությունով: Նշեց, որ մյուս տեսչական մարմիններում որակի ապահովման վարչություններ են, բացի ՀՀ կրթության տեսչական մարմնից: Առաջարկվեց այս հարցերից հետո անցնել օրակարգի հարցերի քննարկմանը:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով, հաստատեց օրակարգի հարցը:

Ա. Ասոյանն առաջարկեց քննարկել օրակարգի 4-դ հարցը՝ 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությունները:

Ալ. Շագաֆյանը ներկայացրեց 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությունները: Հակիրճ ասվեց, որ 2019թ. առաջին եռամսյակում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացել է 25 դիմում-բողոք ՀՀ ուսումնական հաստատություններից, իսկ երկրորդ եռամսյակում 30 դիմում-բողոք: Նշելով, որ առաջին եռամսյակում եղել է 1 դիմում-բողոք դրամահավաքի վերաբերյալ, իսկ երկրորդ եռամսյակում՝ չի եղել, ինչը ուրախալի փաստ է: Դիմումներում առավել հաճախ բարձրացված հարցերը վերաբերել են գործատու-աշխատող փոխհարաբերություններին: Դիմումներում բարձրացված հարցերի մեջ մեծ ծավալ են կազմել դպրոցի տնօրեի և ուսուցչի ընտրության հետ կապված հարցերը:

Ա. Ասոյանը հարցրեց՝ արդյո՞ք ՀՀ կրթության տեսչական մարմինը ունի դիմում-բողոքների մասին կարգ:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը ունի դիմում-բողոքների ստացման, հետագա ընթացք տալու մասին կարգ:

Բ. Փափազյանը հարցրեց՝, արդյո՞ք բողոքների քանակը կամ տեսակը ճշգրիտ չափորոշիչ է, որովհետև, եթե չեն բողոքում՝ չի նշանակում, որ խնդիր չկա: Միգուցե վստահություն չկա: Ճիշտ կլինի հարցում անցկացնել արդեն ստուգված դիմում-բողոքների մասով և պարզել նախորդ ամիսների վերլուծության արդյունքները, ինչը կօգնի պարզել՝ արդյո՞ք խնդիրները քչացել են, թե՞ վստահություն չկա:

Ա. Ասոյանն առաջարկեց քվեարկել 4-դ հարցը:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով, հաստատեց օրակարգի հարցը:

Ա. Ասոյանը առաջարկեց քննարկել օրակարգի միաժամանակ 5-րդ, 6-րդ և 7-րդ հարցերը՝ ՆՈՒՀ-երի ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման, դպրոցների կրթության որակի գնահատման և դպրոցի դասալսման ձևաթղթերը:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ 2019թ. աշխատանքային ծրագրով նախատեսված էր նշված ձևաթղթերի կազմման և փորձարկման աշխատանքները, հնարավորության սահմաններում տեսչական մարմնի կողմից վերահսկվող դաշտերից ստացված ինֆորմացիայի բազմազանության ապահովման նպատակով: Ակնհայտ է, որ ստուգաթերթերով և իրավական ակտերի պահանջների կատարման վերահսկողությամբ, հատկապես կրթության որակական աստիճանի վերաբերյալ, ամբողջական պատկեր ստանալ հնարավոր չէ՝ ուստի փորձ է արվել այս ձևաթղթերով լուծում գտնել: Այս 3՝ ՆՈՒՀ-երի ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման, դպրոցների կրթության որակի գնահատման և դպրոցի դասալսման ձևաթղթերը փորձարկվել են: Աշխատանքների իրականացմանը աջակցել են ԵՊՀ-ի սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները, որոնց աշխատանքի համար տեսչական մարմինը պաշտոնապես հայտնել է շնորհակալություն: 11 ուսումնական հաստատություններում են իրականացվել այդ ձևաթղթերի փորձակումները, որոնց արդյունքում հետաքրքիր պատկեր է ստացվել: Ա. Շագաֆյանը առաջարկեց խորհրդին, ցանկության դեպքում, ներկայացնել ուսանողների կատարած աշխատանքների հաշվետվությունը, որտեղ երևում են այդ համեմատությունները: Արդյունքների վերաբերյալ տրվել են կարծիքներ և առաջարկություններ, որի շնորհիվ լրամշակվել և կազմվել են տվյալ ձևաթղթերը:

Ա. Բախշյանն ասաց, որ եթե ձևաթղթերը փորձարկվել են, ապա ինքը հարցեր չունի:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ ձևաթղթերից մեկը՝ դասալսման գործիքի աշխատանքը իրականացվել է «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ: Նշվեց, որ գործընկերները այս աշխատանքին լուրջ աջակցություն և մեծ փորձագիտական ներուժ են տրամադրել, որի արդյունքում տարվել է համեմատական աշխատանքներ նախկին և ներկա ձևաթղթերի հետ՝ այդյունքում առկա է մեծ տարբերություն: Նշվեց նաև, որ ռիսկային է, երբ ձևաթղթերը թվային գնահատում են պահանջում և մեծ խնդիր է նաև այն իմաստով, թե ովքե՞ր են այդ դասալսումները իրականցնում,- ինչքան էլ գործիքը լավը լինի անյուհանդերձ՝ դասալսում իրականացնողը մարդ է: Նույնիսկ խորհրդի հավանությանը արժանանալուց հետո տեսչական մարմինը բավականին աշխատանքներ ունի կատարելու դասալսման ձևաթղթի կիրառման հետ կապված: Ա. Շագաֆյանը նշեց, որ ունի բոլոր գործընկերների աջակցության կարիքը հետագայում ձևաթղթերը կատարելագործելու և դրանց օգնությամբ մաքսիմալ օբյեկտիվ պատկեր ստանալու համար:

Ա. Բախշյանը հարց ուղղեց, ասելով, որ ըստ որակի ապահովման ստորաբաժանման կողմից ներկայացված հաշվետվության՝ հանրակրթության վարչությունը նշել է, որ աշխատակիցները ձևաթղթերի փորձարկման աշխատանքներին չեն մասնակցել, դասալսման ձևաթուղթը կցված չի եղել:

Ա. Ասոյանն առաջարկեց նախ քվեարկել օրակարգի 5-րդ 6-րդ և 7-րդ հարցերը, որից հետո կանդրադառնան որակի ապահովման ստորաբաժանման կողմից 2019 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը, որի ընթացքում կքննարկվի Ա. Բախշյանի կողմից բարձրացված հարցը:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով, հաստատեց օրակարգի հարցը:

Ա. Ասոյանը Լ. Մաթևոսյանին առաջարկեց նախ ներկայացնել << կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման կողմից 2019 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությունը, այնուհետ՝ որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2019 թվականի ծրագիրը:

Լ. Մաթևոսյանը մինչ հաշվետվությունը ներկայացնելը պատասխանեց Ա. Բախշյանի հարցին, նշելով, որ 2019թ.-ի տարեկան ծրագրում հանրակրթության վարչության վրա է դրված պատասխանատվությունը, որի արդյունքում պարզվել է, որ իրենք չեն մասնակցել:

Ա. Բախշյանը հարցրեց՝ ո՞վ է մասնակցել:

Ռ. Գալստյանը պատասխանեց, որ տեսչական մարմնի ղեկավարի հրամանով աշխատանքային խումբ է ստեղծվել ձևաթղթերի մշակման և փորձակման համար, խումբը ղեկավարել է անձամբ ինքը, որում ներգրավված են եղել հանրակրթության և ռիսկի վարչությունների ծառայողները: Ավելացրեց, որ ժամկետի հետ կապված խնդիր է եղել և ձևաթղթերը 2-րդ եռամսյակի ընթացքում են փորձարկվել:

Լ. Մաթևոսյանը հակիրճ ներկայացրեց << կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման կողմից 2019 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությունը:

1. Նշեց, որ «Կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների ապահովման վերլուծություն» գործառույթի շրջանակներում կատարվել է տեսչական մարմնում կարգապահական կանոնների ապահովման վերաբերյալ տվյալների վերլուծություն: 2019 թվականի 1-ին կիսամյակում ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Էթիկայի կանոնների պահպանման վերլուծության գործառույթը չի կատարվել, քանի որ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը դեռևս չի գործում, քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները մշակված չեն:

2. «Բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն» գործառույթի շրջանակներում իրականացվել է տեսչական մարմնի, նրա ծառայողների դեմ բերված բողոքների պատճառների ու արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն:

3. «Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն» գործառույթի շրջանակներում իրականացվել են տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների, մասնավորապես՝ ստուգումների, տեսչական մարմնի կանխարգելիչ գործունեության, ինչպես նաև՝ անհրաժեշտ իրավական ակտերի առկայության ուսումնասիրություն և առկա թերությունների վերհանում:

Խոսվեց նաև ստուգումների ու ստուգաթերթերի, կանխարգելիչ, խորհրդատվական և իրազեկման հետ կապված որոշ խնդիրների վերաբերյալ, ներկայացվեցին տեսչական մարմնի գործունեությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով հաստատեց օրակարգի հարցը:

Լ. Մաթևոսյանը այնուհետև հակիրճ ներկայացրեց օրակարգի 8-րդ հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2019 թվականի ծրագիրը:

Ներկայացվեց որակի ապահովման ստորաբաժանման գործունեության ուղղվածությունը տեսչական մարմնի գործունեության շարունակական կատարելագործման ապահովմանը՝ տեսչական մարմնի նպատակների ու խնդիրների իրականացման և տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ամբողջական իրագործման նպատակով:

Ասվեց, որ որակի ապահովման ստորաբաժանումն իրականացնում է ներքին հսկողական գործառույթ, որն ուղղված է տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը, արդյունավետության բարձրացմանը և տեսչական մարմնի գործունեության բարելավմանը: Ստորաբաժանումն աջակցում է տեսչական մարմնին ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով իր նպատակների իրագործման հարցում:

Խորհուրդը միաձայն՝ 7 կողմ ձայնով հաստատեց օրակարգի հարցը:

Լ. Մաթևոսյանը առաջարկեց 10-րդ հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 1-ին և 2-րդ եռամսյակների կատարողականների գնահատումը ընդունել ի գիտություն:

Խորհուրդը 10-րդ հարցը ընդունեց ի գիտություն:

Խորհուրդը միաձայն որոշեց օրակարգի 3-րդ հարցը՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները քննարկել հաջորդ նիստին:

Ա. Ասոյանը հանձնարարեց, որ հաջորդ նիստի օրակարգի որպես՝

1-ին հարց՝ ներկայացնել ՀՀ կրթության տեսչական մարմնի ներքին կարգապահական կանոնները:

2-րդ հարց՝ կայքում հրապարակել դիմում-բողոքների ներկայացման օրինակելի ձևը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Ա. Ասոյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ա. Ավանեսյան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա. Վարդապետյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյան

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական Ա. Բախշյան

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի զարգացման գծով տնօրեն

Ա. Մարտիրոսյան

Կառավարման խորհրդի քարտուղար Ա.Գևորգյան